ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ



2016
ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Հարգելի՛ համաքաղաքացիներ,

2016 թվականն ամփոփում ենք նոր և համարձակ նախաձեռնություններով, ծավալուն նախագծերով և քաղաքային կառավարման ոլորտում որոշումների կայացման գործընթացին մեր համաքաղաքացիների ակտիվ մասնակցությամբ: Տարվա ընթացքում իրականացված բոլոր աշխատանքները հնարավոր եղավ կյանքի կոչել միայն համատեղ ջանքերի և փոխադարձ վստահության շնորհիվ: Ավանդական դարձած այս հաշվետվության միջոցով նպատակ ունենք մեկ անգամ ևս ընդգծելու, որ մենք հաշվետու ենք մեր համաքաղաքացիներին:

Նախորդ տարիներին իրականացված ծրագրերն այս տարի համալրեցինք նոր և լայնամասշտաբ նախաձեռնություններով. բարեկարգեցինք այգիներ, պուրակներ, փողոցներ ու բակային տարածքներ, կառուցեցինք նոր խաղահրապարակներ ու ժամանցի վայրեր: Շարունակեցինք կարգի բերել ու ավելացնել քաղաքային լուսավորությունը, ոռոգման ցանցերը, ընդլայնել ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները, և, իհարկե, կարողացանք վերանորոգել շենքեր, կրթության, մշակույթի ու մարզական օջախներ:

Տարվա ընթացքում կատարված բոլոր աշխատանքների հիմքում եղել է և շարունակում է մնալ մայրաքաղաքի համաչափ զարգացումը, արժանավայել քաղաքային միջավայրի ապահովումն ու մեր սերունդներին կանաչ Երևան ժառանգելու տեսլականը: Ուրախալի է, որ քաղաքում կատարվող դրական փոփոխությունները մեր համաքաղաքացիների համար ոչ միայն ակնառու, այլև «սովորական» դարձան: Այսօր արդեն մեզանից ոչ ոք այլևս չի պատկերացնում քաղաքային միջավայրն ու առօրյան առանց այդ փոփոխությունների և զարգացումների:

Մայրաքաղաք Երևանի սիրելի՛ բնակիչներ, համոզվա՛ծ եմ, որ հաջորդող տարիներին ևս նույն նվիրումով, սրտացավությամբ և հետևողականությամբ մենք միասին շարունակելու ենք կյանքի կոչել իրատեսական ծրագրեր՝ ապահովելով մայրաքաղաքի կայուն զարգացումը:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ



Նուբարաշեն վարչական շրջանի սիրելի՛ բնակիչներ,

տարեցտարի ավելի ներկայանալի, հարմարավետ ու բարեկարգ է դառնում մեր սիրելի վարչական շրջանը: Ամփոփելով անցնող տարվա ընթացքում արձանագրված ձեռքբերումները՝ ցանկանում եմ արժևորել յուրաքանչյուրիդ մասնակցությունը վարչական շրջանին վերաբերող նախաձեռնություններին: 2016 թվականը շոշափելի ձեռքբերումների տարի էր: Հիմնանորոգվեց կենտրոնական զբոսայգին, վերանորոգվեցին բակային տարածքներ, շահագործման հանձնվեց շախմատի դպրոցը, վերանորոգվեցին շենքերի տանիքներ և շքամուտքեր, նորաստեղծ թաղամասերում անցկացվեցին ջրագծեր, Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանները միացնող ճանապարհահատվածում էլ անցկացվեց երկար սպասված արտաքին լուսավորության ցանց: Սիրելի՛ նուբարաշենցիներ, վստահության, փոխադարձ հարգանքի ու նվիրումի շնորհիվ է, որ ունենք օր օրի ակնհայտորեն զարգացող ու ներկայանալի վարչական շրջան: Ու համոզված եղեք, որ առաջիկա տարիների ընթացքում ևս կիրականացվեն բազմաթիվ ծրագրեր՝ ի բարօրություն Նուբարաշենի և նուբարաշենցիների:

Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավար՝
Արթուր Կիրակոսյան

s

Թեքահարթակների կառուցում

- Հանրային նշանակության, ինչպես նաև մասնավոր օբյեկտների մուտքերում կառուցվել է **20** թեքահարթակ:

2016 թվականի ընթացքում վարչական շրջանում իրականացվել են փողոցների, մայթերի և բակերի մասնակի ասֆալտապատման աշխատանքներ.

- փողոցներ և բակեր՝ **12 700 մ²**, մայթեր՝ **491 մ²**, փոսանորոգում՝ **2584 մ²**,
- նոր եզրաքարեր տեղադրվել են 11փ. 8-րդ, 9-րդ շենքերի բակերում, 3-րդ փողոցի խաղահրապարակում՝ **750 գծմ**,
- եզրաքարեր են փոխարինվել 3 -րդ, 11-րդ, 12-րդ փողոցներում՝ **72 գծմ**,
- նոր բազալտե եզրաքարեր են տեղադրվել կենտրոնական զբոսայգում՝ **735 գծմ**, բետոնե եզրաքարեր՝ **2 026 գծմ**:

Մայթերի, պուրակների սալիկապատում.

- 9-րդ փողոցի կենտրոնական զբոսայգում իրականացվել է անցուղիների սալիկապատում՝ **2 653 մ²**

2016 թվականի ընթացքում վարչական շրջանում իրականացվել է կենտրոնական զբոսայգու հիմնանորոգումը.

Զբոսայգում տեղադրվել են նոր նստարաններ, ամառային և ձմեռային զրուցարաններ, սանհանգույցներ: Երեխաների ժամանցն ապահովելու համար այգում տեղադրվել են մանկական և մարզական խաղասարքեր, կառուցվել է մշակութային միջոցառումների բեմահարթակ, շատրվան, ցայտաղբյուր:

Ոռոգման ցանցի անցկացում, եղած ցանցի վերանորոգում

- ոռոգման նոր ցանց է անցկացվել 9-րդ փողոցի կենտրոնական զբոսայգում՝ **1 558գծմ**,
- ստեղծվել են **4 700մ²** ընդհանուր մակերեսով նոր կանաչ տարածքներ:

2016թ. ծաղկային տարածքը կազմել է 800մ²

- տնկվել է շուրջ **20 000** ծաղկասածիլ, շուրջ **1 700** վարդ,
- գարնանային և աշնանային ծառատունկերին տնկվել են **3 050** ծառ և **700** թուփ,
- աշնանը տնկվել է կակաչի **7 000** սոխուկ,
- իրականացվել է շուրջ **672** ծառի սանիտարական էտ:

Հանգստի գոտիների ստեղծում

- Ստեղծվել է նոր հանգստի գոտի՝ **4 000մ²** մակերեսով:

ԲՆԱԿՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Շքամուտքերի վերանորոգում.

- վերանորոգվել է բազմաբնակարան շենքերի թվով **11** շքամուտք:

Տանիքների վերանորոգում.

- թվով **2** բազմաբնակարան շենքում հիմնանորոգվել է **2 189 մ²** թեք տանիք,
- իրականացվել են թվով **20** բազմաբնակարան շենքերի **2 300մ²** ընդհանուր մակերեսով թեք տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքներ:

Համագործակցություն համատիրությունների հետ.

- բազմաբնակարան շենքերում ջրահեռացման խողովակների տեղադրման և տանիքների մասնակի վերանորոգման աշխատանքների կազմակերպման համար համատիրությանը տրամադրվել է վերամբարձ կռունկ, ավտոաշտարակ և հատուկ տեխնիկա,





- շահագործման է հանձնվել 3 բակային տարածք,
- տեղադրվել են 4 համալիր, մանկական 4 խաղ և 3 մարզասարք, 3-րդ փողոցի խաղահրապարակում, 11փ. 8-րդ և 9-րդ շենքերի բակային տարածքներում իրականացվել են նկարազարդման աշխատանքներ:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԵՐ», «ԵՐԵՎԱՆ ՋՈՒՐ», «ԵՐԵՎԱՆ ԳԱԶ» ՓԲԸ-ՆԵՐԻ ՀԵՏ

Ջրամատակարարման համակարգի վերանորոգում.
- վերանորոգվել են ջրագծի բազմաթիվ հանգույցներ, կարգավորիչներ և խողովակներ,
- կարգաբերվել է **22** դիտահոր:

Կոյուղատար համակարգի վերանորոգում.
- Նուբարաշեն «Գ» թաղամասում կառուցվել է **1 850 գծմ** երկարությամբ ջրագիծ,
- 11-րդ փողոցի վերնամասում կառուցվել է **1 250 գծմ** երկարությամբ ջրագիծ:

Համագործակցություն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ, «Երքաղլույս» ՓԲԸ հետ.
- նորերով է փոխարիվել թեքված և վթարային 6 հենասյուն,
- փոխարինվել և կարգավորվել են 11-րդ փողոցի 15-րդ և 16-րդ բազմաբնակարան շենքերը սնող մալուխագծերը,
- Նուբարաշենի 8 և 9-րդ փողոցի խաղահրապարակում անցկացվել է **102 գծմ** արտաքին լուսավորության ցանց,
- Նուբարաշենի կենտրոնական զբոսայգում անցկացվել է **950 գծմ** արտաքին լուսավորության ցանց,
- Նուբարաշենի 3-րդ փողոցի խաղահրապարակում անցկացվել է **8 գծմ** արտաքին լուսավորության ցանց,
- Նուբարաշենի 2-րդ փողոցում ամբողջովին փոխարինվել են հենասյուները և էլեկտրական մալուխները:

Այցելություն զորամասեր

- Նուբարաշեն վարչական շրջանից իրականացվել է ՀՀ և ԼՂՀ սահմանամերձ գոտիներում ծառայող երևանաբնակ **15** ժամկետային զինծառայողների ծնողների այցելությունը զորամասեր:

Համագործակցություն ՀԿ-ների և միջազգային կազմակերպությունների հետ.

- Տարաբնույթ սոցիալական ծրագեր են իրականացվել «ՍԱՏԱՐ» հաշմանդամների ՀԿ, «Գայանե» ՀԿ, «Լենա» ՀԿ, «Օգնեք կարիքավոր երեխաներին» ՀԿ, «Առդա» բարեգործական հիմնադրամի և «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի հետ: Համագործակցության արդյունքում տարաբնույթ աջակցություն է ցուցաբերվել **1 300** շահառուի:

«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության սոցիալական բաղադրիչի շրջանակում **70** ընտանիքի հատկացվել է անհրաժեշտ կենցաղային տեխնիկա:

- Նոր գույքով համալրելու ծրագրով Նուբարաշեն վարչական շրջանում գործող թիվ 125 մանկապարտեզին տրամադրվել է **30** մանկական աթոռ, **1** սառնարան,
- վարչական շրջանի ղեկավարի աջակցությամբ մանկապարտեզին տրամադրվել է օդորակիչ դահլիճի համար, հատակի օդորակիչ պահեստային մասի համար,
- մանկապարտեզի ավարտական խմբերի սաներին տրամադրվել են դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ,
- պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև տարաբնույթ թեմատիկ հանդեսներ, խաղեր և մրցույթներ,
- թիվ 175 միջնակարգ դպրոցում գործում է նախակրթարան, որտեղ հաճախում է **25 երեխա**:

Նուբարաշենում շահագործման է հանձնվել շախմատի մանկապատանեկան մարզադպրոցը

- Շախմատասեր փոքրիկների համար ապահովվել են բոլոր պայմանները: Նորաստեղծ դպրոցն ունի անհրաժեշտ կահույքով և պարագաներով կահավորված դասասենյակներ: Դպրոց հաճախում է **120** երեխա,
- «Երևանյան ամառ» ծրագրով իրականացվել են մանկական ժամանցային և ուսուցողական ծրագրեր, գործել են բակային ճամբարներ, կազմակերպվել է **60** երեխայի հանգիստը Հանքավանի «Լուսաբաց» մարզաառողջարանային ճամբարում:

Նուբարաշեն վարչական շրջանում գործող «Երևանի Նուբարաշեն մարզամշակութային կենտրոն» ՀՈԱԿ հաճախում է 276 երեխա

Վարչական շրջանի մարզական թիմերն ակտիվ մասնակցել են.

- ՀՀ Անկախության 25-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային 25-րդ մարզական խաղերին,
- ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկությանը, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» 2016 համաքաղաքային բակային ավանդական փառատոնին,
- ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթին,
- բնակչության առողջ ապրելակերպի զարգացման շրջանակում մարզաառողջարարական պարապմունքներ, սպորտլանդիաներ, մարզական տարբեր միջոցառումներ են կազմակերպվել վարչական շրջանի զբոսայգիներում, բակերում, վարչական շրջանում տեղադրված բազմաֆունկցիոնալ դաշտերում:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Պետպատվերի շրջանակում բուժօգնության ցուցաբերում, առողջարանային ուղեգրերի տրամադրում.

- պետպատվերի ուղեգիր տրամադրվել է **14 բնակչի**,
- առողջարանային ուղեգիր է տրվել **2 բնակչի**:

Նուբարաշեն վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմը համագործակցում է Ֆրանսիայի Առնուվիլ քաղաքի քաղաքապետարանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հադրութ քաղաքի քաղաքապետարանի և Գեղարքունիքի մարզի Արծվանիստ համայնքի հետ:

Համագործակցության արդյունքում կատարվել են երկկողմ այցելություններ:
«Էրեբունի-Երևան 2798» տոնակատարության շրջանակում Չեբոքսարի քաղաքից ժամանած պաշտոնական պատվիրակության ներկացուցիչները հյուրընկալվել են Նուբարաշեն վարչական շրջանում:

2016
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ
ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Թեժ գիծ՝

+(374 11) 518-738
nubarashen@yerevan.am

www.yerevan.am